**Արձանագրություն N 4**

Протокол N 4

**Արովյանի համայնքային կոմունալ տնտեսություն ՀՈԱԿ -Ի կարիքների համար**
**ԱԲՀԿՏ--ԳՀԱՊՁԲ-25/31 ծածկագրով գնում կատարելու գնահատող հանձնաժողովի նիստի**
**Заседание оценочной комиссии по проведению закупки по коду ABHKT-GHAPZB-25/31**

ք.Աբովյան 27/06/2025թ
. Г.Абовян

ժամը 12:15

Գնահատող հանձնաժողովի՝
Նախագահ՝ Ա.Սիմոնյան
Անդամներ՝ Լ.Գասպարյան, Գ.Մարտոյան. Ա.Ստեփանյան
Քարտուղար՝ Ս.Աղաջանյան
Оценочная комиссия:
Председатель: А.Симвнян
Члены: Л.Гаспарян, Г Мартоян, А.Степанян
Секретарь: С. Агаджанян

1. ԱՁ ԳԱՐԻԿ ՆԵՐՍԻՍՅԱՆԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԻՑ ԶՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ
Об открытии торгов
--------------------------------------------------------------------------------------------------

Ա.Սիմոնյան

1.1 Ընդունել ի գիտություն, որ գնման ընթացակարգի NN 1, 2, 3, 4 չափաբաժիններով հաղթող մասնակից ԱՁ Գարիկ Ներսիսյանը պայմանագիրը ստորագրվել էր թերություններով և բացթողումներով, մասնավորապես .

_ տուժանքի համաձայնագրերի վրա ստորագրության հետ դրվել է կնիք, բայց պայմանագրի մեջ կնիքը բացակայում է ,

_ բանկային վավերապայմանների մեջ բանկի անվանումը լրացված է տառասխալներով:

Բանավոր պայմանավորվածությամբ, ժամկետ էր տրվել շտկել և ուղարկել ճիշտ տարբերակը, սակայն Գարիկ Ներսիսյանի կողմից բանավոր ստացել ենք պայմանագիրը կնքելու մասին մերժում: Այնուհետև գրություն ենք ուղարկվել 2025 թվականի հունիսի 23-ին և առաջարկել ենք եռօրյա ժամկետում կնքել պայմանագիրը կամ չկնքելու վերաբերյալ տեղեկացնել մեզ հետադարձ գրությամբ:

ԱՁ Գարիկ Ներսիսյանի կողմից մեր նշած ժամկետում պատշաճ ստորագրված պայմանագիր կամ գրություն պայմանագիրը կնքելու մերժման մասին չենք ստացել:

Ղեկավարվելով ՀՀ <<Գնումների մասին>> օրենքի 36-րդ հոդվածի3-րդ մասով, այն է՝

*<<Եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո սույն օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված ժամկետում չի ստորագրում պայմանագիրը կամ պատվիրատուին չի ներկայացնում պայմանագրի և (կամ) որակավորման ապահովումը, իսկ կնքվելիք պայմանագրով կանխավճար նախատեսված լինելու դեպքում՝ նաև կանխավճարի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրն ստորագրելու իրավունքից:>>*,

առաջարկում եմ ԱՁ Գարիկ Ներսիսյանին զրկել պայմանագիր կնքելու իրավունքից:

1.2 Ղեկավարվելով ՀՀ <<Գնումների մասին>> օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի <<բ>> ենթակետի և նույն հոդվածի 2-րդ մասի պահանջներով և հիմք ընդունելով վերոգրյալ հանգամանքները տնօրենին ներկայացնել ԱՁ Գարիկ Ներսիսյանին Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին որոշման նախագիծ:

1.1 Признать, что договор победителя процедуры закупки NN 1, 2, 3, 4 траншей, ЧП Гарик Нерсисян, был подписан с недостатками и упущениями, в частности:

_ на договорах о штрафных санкциях вместе с подписью была проставлена печать, но в договоре печать отсутствует,

_ в банковских условиях наименование банка заполнено с опечатками.

По устной договоренности был дан срок для исправления и отправки корректной версии, но мы получили устный отказ от подписания договора от Гарика Нерсисяна. Затем нам было отправлено письмо от 23 июня 2025 года и предложено подписать договор в трехдневный срок или сообщить нам о неподписании ответным письмом.

Ни надлежаще подписанного договора, ни письма от Гарика Нерсисяна об отказе от подписания договора мы не получили.

Руководствуясь частью 3 статьи 36 Закона РА «О закупках», а именно:

<<Если выбранный участник после получения уведомления о подписании договора и проекта договора не подписывает договор в срок, указанный в части 1 статьи 35 настоящего Закона или не представляет заказчику договор и (или) подтверждение квалификации, а также подписываемый договор. Если договор предусматривает аванс, то он также лишается права подписания договора. >>,

Предлагаю лишить ЧП «Гарик Нерсисян» права подписания договора.

1.2 Руководствуясь требованиями подпункта <<б>> пункта 6 части 1 статьи 6 Закона РА «О закупках» и части 2 этой же статьи и принимая за основу вышеуказанные обстоятельства, представить директору проект решения о включении ЧП «Гарик Нерсисян» в список участников, не имеющих права участвовать в процессе закупки.

Ընդունվել է որոշում` կողմ – 4, դեմ – 0: Принято решение: за -4, против – 0

## 2. ԱՁ ՀՐԱՆՏ ՂԱԼԻՄՅԱՆԻՆ ՄՐՑՈՒՅԹԻ ՀԱՂԹՈՂ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հինք ընդունելով ԱԲՀԿՏ-ԳՀԾՁԲ-24/07 ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում 2024 թվականի մայիսի 20-ի ՀՀ ֆինանսների նախարարության տրված N 03/26/10650-2024 պարզաբանումը պայմանագիրը կնքելու որոշումից հրաժարվելու դեպքում հաղթող ճանաչել հաջորդ տեղ զբաղեցրած մասնակցին, որպես նախադեպ և ,հաշվի առնելով այն հանգամանքը, որ NN 1, 2, 3, 4 չափաբաժիններով

մրցույթի 2-րդ տեղ զբաղեցրած մասնակից էր ճանաչվել ԱՁ Հայկ Ղալիմյանը, ծանուցել ԱՁ Հայկ Ղալիմյանին պայմանագիր կնքելու որոշման մասին և ներկայացնել պայմանագրի նախագիծը:

Приняв разъяснение, предоставленное Министерством финансов Республики Армения в рамках процедуры закупки с кодом ABHKT-GHCZB-24/07, в случае отказа от заключения договора признать победителем, как прецедент, следующего участника, и, принимая во внимание тот факт, что участником, занявшим 2-е место в тендере по лотам NN 1, 2, 3, 4, было ЧП «Айк Галимян», уведомить ЧП «Айк Галимян» о решении заключить договор.

Ընդունվել է որոշում՝ կողմ – 4, դեմ – 0: Принято решение: за -4, против – 0

Հանձնաժողովի Նախագահ , Председатель — Ա.Սիմոնյան А.Симвнян

Անդամներ՝ Члены — Լ.Գասպարյան, Гаспарян Л.

Գ.Մարտոյան, Г.Мартоян

Ա.Ստեփանյան, А.Степанян

Քարտուղար, Секретарь — Ս. Աղաջանյան С. Агаджанян